ԱՆՏԱՌՆԵՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

ՄԱՍՆԱՒՈՐ ԱՆՁԵՐԻՆԸ ՄԱՍՆԱՒՈՐԱՊԷՍ ԵՒ ԱՆՏԱՌԱՊԱՇՏՊԱՆ ՕՐԷՆՔՆԵՐԸ

Ա. Ա.-ի

Թերևս մեր ընթերցողներից շատերին զարմացրած լինենք, ասելով, որ Կովկասը աշխարհքիս ամենաանտառոտ երկիրներից է։ Մենք այնքան ենք գանգատւում անտառների բացակայութեան վերայ մեր երկրի դանազան տեղերում, այնքան ենք տեսնում մի ժամանակ անտառ ունեցած և այժմ ամայի դարձրած տեղեր, որ մեզանում արմատացել է այս կարծիքը, իբր թէ մեր երկիրը անտառներով աղքատ երկիր է։ Այդ կարծիքը աւելի ևս ամրանում է այն իրողութիւնով, որ Բաթում և Բաքու քաղաքները, երբեմն անգամ Անդրկովկասեան երկաթուղին իրանց տախտակների, իսկ վերջինս իւր շպալների պիտոյքների համար արտասահման են դիմում։ Եւ իրօք, չինութեան փայտը Բաքուն ստանում է հեռու Ռուսիայից՝ Կամա, Վեատկա, Զուսեւայա և այլ գետերի վերին մասերից, ուրեմն հազարաւոր վերստ հեռուից, Վոլգայի և սորա օժանդակ գետերի վերայով և փոքր ինչ աւելի քիչ տարածութեամբ՝ Կասպից ծովով։ Բաթումը բերել է տալիս տախտակներ և փայտեր Խերսոնից, Գալացից, Շեդիայից, Նորւեգիայից և մինչև անգամ Հիւսիսային Ամերիկայից։ Վերջ ընթեր երկու դէպքերում այդ ապրանքը պտտում է ամբողջ Արևմտեան Եւրոպան և լող է տալիս ամբողջ Միջերկրական և Սև ծովերը. իսկ Ամերիկայից խօմ նա համարեա երկրագունդն է պտտում։ Դիցուք թէ նաւատէրերը, դալով դիցուք Բաթում, իրանց հետ վերցնում են այդ երկիրներից փայտը շատ էժան գնով, լոկ որպէս նաւի անհրաժեշտ բալաստ, միայն թէ իրանց ճանապարհածախսը ծածկեն, բայց ախար չէ թէ այդ փայտը իւր հայրենի տեղում ծախսեր է նստել մինչ ծովի նաւահանգիստ հասնելը՝ գետերով բերելը, տրանսպորտը անտառի ճանապարհներով և երկաթուղիներով, վեր բերելը և կրկին բարձելը ճանապարհների մի սիստեմից միւսը անցնելու համար և այլն։

Ունենալ անտառներ և դիմել այդքան հեռու—դա գրեթէ ամօթ է և ցույց է տալիս թէ որքան մենք քիչ դիտենք օգտուել մեր երկրի բնական հարստութիւնից։

Բայց որ այդ հարստութիւնը կայ, թւերը այդ ապացուցանում են ամենափայլուն կերպով։ Կովկասի անտառների մասին մենք ունինք պատմական աշխատասիրութիւններ Եա. Ս. Մեդվեդևի «Կովկասեան անտառները» (Очерки Кавказскихъ лѣсовъ), ապված Կովկասեան Գիւղատնտ. ընկերութեան ամսագրում (1880 թ., հատոր III) և նոյն հեղինակի գիրքը՝ «Պետական գիւղացիների լարաբերութիւնը դէպի տէրունական անտառները Անդրկովկասում», Թիֆլիս, 1888 թ.։ Այդ ուսուածքները որպէս նաև Կովկասեան երկրի քարտէզը, ուր նշանակուած են անտառային տարածութիւնները, հետևեալն են ասում։

1) Կովկասը (Հիւսիս. Կովկ. և Անդրկ.) ունի անտառներ . 6.913.200 դես.
Ունենալով ազգաբնակութիւն. . . . . 7.310.045 հոգի
Ուրեմն մի հոգու վերայ ընկնում է $0._{95}$ դես.

2) Անդրկովկասը, առանձին վերցրած, ունի անտառ. . . 4.801.000 դես.
Ունենալով ազգաբնակութիւն . . . . . 4.707.926 հոգի
Ուրեմն մի հոգու վերայ ընկնում է $1._{01}$ դես.

3) Հիւսիս. Կովկասը, առանձին վերցրած, ունի անտառ. 2.112.000 դես.
Ունենալով ազգաբնակութիւն . . . . . 2.602.119 հոգի
Այսինքն մի հոգու վերայ ընկնում է $0._{81}$ դես.

Վերցնենք այժմ այն նահանգները, որ կտրում է Անդրկովկասի երկաթուղին։ Դոքա են՝ Քութայիսի, Թիֆլիսի, Գանձակի և Բաքուի նահանգները։

ա. Քութայիսի նահանգը ունի անտառներ. . . . . 1.508.000 դես.
Ունենալով ազգաբնակութիւն . . . . . 922.564 հոգի
Ուրեմն մի հոգու վերայ ընկնում է $1._{63}$ դես.

բ) Թիֆլիսի նահանգն ունի անտառներ. . . . . 1.104.000 դես.
Ունենալով ազգաբնակութիւն . . . . . 922.564 հոգի
Ուրեմն մի հոգու վերայ ընկնում է $1._{38}$ դես.

գ) Գանձակի նահանգն ունի անտառներ. . . . . 855.000 դես.
Ունենալով ազգաբնակութիւն . . . . . 800.000 հոգի
Ուրեմն մի հոգու վերայ ընկնում է $1._{18}$ դես.

դ) Բաքուի նահանգն ունի անտառներ. . . . . 428.000 դես.
Ունենալով ազգաբնակութիւն . . . . . 735.304 հոգի
Ուրեմն մի հոգու վերայ ընկնում է $0._{58}$ դես.

Ընդամենը Անդրկովկասեան երկաթուղու գծի շրջանում
անտառների տարածութիւնն է. . . . . 3.896.000 դես.
Որից մասնաւոր անձերին պատկանում են. . 1.571.000 »
Իսկ պետական են (թագաւորական). . . . . 2.325.000 »

որ նշանակում է, թէ պետական անտառների տարածութեան լարաբերու-

թիւնը դէպի մասնաւոր անձերի (կալուածատիրական) անտառների տարածութիւնը է՝ 1.3։ 1, իսկ ամբողջ անտառային տարածութեան յարաբերութիւնը դէպի մասնաւորների անտառները է՝ 2.3։ 1։

Համեմատութիւնները աւելի հեռու տանելու համար, տեսնենք թէ առհասարակ Կովկասի և նորա նահանգների ոչ միայն անտառային, այլ առհասարակ ընդհանուր տարածութեան որ մասն են կազմում անտառային տարածութիւնները.

ա) Կովկասի (Հիւսիս. Կովկ. և Անդրկովկ.) անտառների տարածութիւնն է մօտ . . . . . 42.534.305 դես.
Անտառների տարածութիւնն է . . . . . 6.913.200 »
այսինքն 100 դեսեատին ընդհանուր տարածութեան վերայ ընկնում է 16.2 դեսեատին։

բ) Անդրկովկասի ընդհանուր տարածութիւնն է . . . . 22.198.473 »
Անտառների տարածութիւնն է . . . . . 4.801.000 »
այսինքն 100 դեսեատին ընդհանուր տարածութեան վերայ ընկնում է 16.2 դեսեատին։

գ) Հիւսիսային Կովկասի ընդհ. տարածութիւնն է . . . 20.334.832 »
անտառների տարածութիւնն է . . . . . 1.112.200 »
այսինքն 100 դես. ընդհանուր տարածութեան վերայ ընկնում է 10.4 դեսեատին։

դ) Բուքայիսի նահանգի տարածութիւնն է. . . . . 3.223.569 »
անտառներինը . . . . . 8.104.000 »
100 դեսեատինի վերայ ընկնում է 45.3 դես.

ե) Թիֆլիսի նահանգի տարածութիւնն է . . . . . 3.699.656 »
անտառներինը . . . . . 1.104.000 »
100-ի վերայ ընկնում է 29.8 դեսեատին։

զ) Դանձակի նահանգի տարածութիւնն է. . . . . 3.993.908 »
անտառներինը . . . . . 856.000 »
100-ի վերայ ընկնում է 21.4 դեսեատին.

է) Բաքուի նահանգի տարածութիւնն է . . . . . 3.572.989 »
անտառներինը . . . . . 428.000 »
100 դեսեատինի ընդհանուր տարածութեան վերայ ընկնում է 12 դեսեատին։

Ահա թիւերը Կովկասի և մասնաւորապէս Անդրկովկասի և սորա առանձին նահանգների վերաբերեալ, թիւեր, որոնցով հաստատւում է, որ, համեմատած իւր տարածութեան հետ, Կովկասը եւրոպական երկիրներից լեռ է միայն եւրոպական Ռուսիայից, Նորվեգիայից և Շուեդիայից։ Եւրոպական Ռուսիայում մի հոգու վերայ ընկնում է անտառային տարածութիւն երկու ու կէս անգամ աւելի, քան Կովկասում, իսկ Նորվեգիայում մի հոգու վերայ գալիս է 15.15 դես., Շուեդիայում՝ 5.31 դեսեատին անտառային տարա-

ծութիւն (մինչդեռ Կովկասում առհասարակ մի հոգու վերայ ընկնում է 0.95 և կամ մօտ մի դեսեատին անտառ)։

Կովկասի անտառները ընտրել են իրանց համար գլխաւորապէս Կովկասեան գլխաւոր և փոքր շղթաները իրանց ճիւղաւորութիւններով, թողնելով ընդարձակ լարթութիւններ իբր բաժին անապատային խոտի, երբեմն և մացառների բուսականութեան։ Այդպէս են Կովկասի հովիտների հիւսիսային և արևելեան մասերը։ Նոյնն է և Եւրոպական Ռուսիայում, այս զանազանութեամբ միայն, որ վերջինումս անտառային շրջանները հարիւրաւոր և հազարաւոր վերստեր հեռու են անտառազուրկ շրջաններից, մինչդեռ մեզանում հարիւր և մեծ մասամբ միայն տասնեակ վերստերով բաժանուած են նոքա մէկը միւսից։ Բաթումի շրջանի անտառները, որ 17.200 դեսեատին են, հենց կպչում են Բաթում քաղաքին և հասնում երկաթուղու գծին։ Բաքուի նահանգում Թալըշեան անտառները Բաքուից 200 վերստ են, Ղուբայինը 150 վերստ, Շամախինը՝ 60 վերստ։

Վերը առաջ բերած թուերից, կարծում ենք, որ այս եզրակացութիւնն է բղխում, որ եթէ մեզանում անտառի փայտեղէնի պակասութիւն է զգացւում, այդ նորանից չէ, որ անտառները մեզանում պակաս են։ Արդ, որոնք են այդ պատճառները։ Ահա դոքա՝ կալուածատիրական (մասնաւոր անձերի) անտառների ջնջելը ճանապարհների և բնակութեան մօտ տեղերում, պատահող հրդեհների հետ միասին. իսկ միւս պատճառը նորա մէջն է, որ ճանապարհներից հեռու գտնուող անտառատիպտի տրանսպորտի համար չը կայ կանոնաւոր կազմակերպութիւն։ Այլ խօսքերով մեր անտառներից գերան հասցնելը մինչև մեծ վաճառատեղերը շատ թանկ է նստում, աւելի թանկ, քան աշխարհի էն ծայրից մինչ մեր երկիրը տախտակ բերելը։

Թէ ինչպէս, դորանում ես համոզուեցի՝ կարդալով պ. Եա. Կ. Վասիլեւի աշխատասիրութիւնը Կովկասեան կայսերական Գիւղատնտեսական ընկերութեան այս տարուայ «Գործքեր»-ի մէջ, № 6—9 [1]։

Բանից դուրս է գալիս, որ մեր անտառները մնացել են միայն այնպիսի տեղերում, որտեղից՝ գերան բերելու օրինակ Թիֆլիս հասցնելը, մեր տեղական հաղորդակցութեան հանգամանքների մէջ, նստում է սարսափելի թանկ. այսինքն միայն ճանապարհածախսը կազմում է գնի կէսը!

Եւ ահա ինչպէս։ Դիցուք գերանը բերում է Գորուայ կամ Ախալցխայի գաւառներից։ Գորուայ ե՞Ախալցխայի գետերի վերայ 8 վերշոկանոց գերանը ծախսում է 6 ր. 50 կոպէկ, որից մի մասը պէտք է հաշուել իբր

---

[1]) Труды Императорскаго Кавказск. Общ. Сельск. Хозяйства, Іюнь—Сентябрь, № 6—9, Тифлисъ, 1890 года.

վարձատրութիւն՝ մի զոյգ գոմէշներով կամ եզներով 15 վերստ հեռու անտառից գերանը բերելու համար։ Այդ գնի մէջ մտնում է 2 ր. 20 կոպէկ, որ գերան կտրող կապալառուն տուել է անտառի տիրոջ։ Ուրեմն գերանի տիրոջ մնաց 4 ր. 30 կոպէկ։ Հիմայ տեսնենք այդ գնից ինչ օգուտ է ստանում գերանի տէրը։ Անտառից մինչ գետը հասցնելու համար գերանատէրը պէտք է վճարէ մի զոյգ գոմէշների տիրոջ օրական 1 ր. 50 կոպ. և անտառի բանուորին օրական 80 կոպէկ։ Արդ, ծառը կտրելու համար նա վճարում է 40 կոպ., երկու բանուորի, որոնք գերանը իջեցնում են անտառի զառիվայրով—1 ր. 60 կոպ., կէս օրավարձ՝ գերանը անտառի առաջին պահեստը հասցնելու համար—75 կոպ., այդտեղից գերանը հասցնելու համար մինչև գետի նաւահանգիստը—1 ր. 50 կոպէկ։ Ուրեմն գերանատիրոջ ծախք նստել է 4 ր. 25 կոպ., իսկ անտառատիրոջ 2 ր. 20 կոպէկն էլ հաշուելով՝ 6 ր. 45 կոպէկ, մինչդեռ, որպէս ասացինք, գերանը նոյն տեղում ծախւում է 6 ր. 50 կոպէկ։ Ասել է թէ գերանատիրոջ, այդ գնով, օգուտ չի մնում համարեա, քանի որ այդ մնացած 5 կոպէկը գնում է անասունի նալելուն, գործիքների գրստելուն և այլն։

Դէ հիմայ տեսնենք, թէ ինչ է լինում յետոյ այդ գերանի հետ մինչ Թիֆլիս հասնելը և խերխանոցից դուրս գալը։ Այդ գերանը առնում է լաստապանը 12 միւս գերանների հետ միասին և, երկ կողմանի լաստի կապելով, լողացնում է մինչ Թիֆլիս, ուր նա ծախում է 8 ռուբլիով։ Նորան դիցուք սղոցում են չոգու սղոցանոցում։ Ինչ է աշխատում գործարանատէրը, որ գերանը դիցուք վերշոկանոց տախտակների է սղոցում։ 8 վերշոկանոց լայնութեան տախտակներ, երկու ծայրակոճղ և 4 կողատախտակ։ Ներկայ գներով առաջինները նա կը ծախի հատը 1 ր. 50 կոպէկով, երկրորդները հատը 75 կոպէկ և երրորդները հատը 40 կոպէկ։ Ընդամենը նա կը ստանայ 10 ր. 60 կոպէկ։ Արդ, սղոցանոցի տիրոջ այդ սղոցելը, վերշոկին 3 կոպէկի հաշուով, նստում է 1 ր. 74 կոպէկ։ Ուրեմն 8 ռուբլու հետ, որ նա վճարել է գերանի համար, այդ կ'անէ 9 ր. 74 կոպէկ, որը, հանելով 10 ր. 60 կոպէկ գումարից, կը ստանանք, որ սղոցատիրոջ մնաց 86 կոպէկ օգուտ։ Ահա այդ 86 կոպէկից նա պէտք է բաժին հանէ իւր համար, սղոցանոցի բեմոնտի համար, կապիտալի տոկոսի համար և վերջապէս քաղաքային հարկի համար։

Իսկ այն 1 ր. 50 կոպէկը որ վերցրեց լաստապանը? Այդ նրան չը մնաց որպէս զուտ օգուտ։ Լաստը նա միայնակ չը վարեց, նրան հարկաւոր էր օգնական։ Երկու հոգու համար այդ 1 ր. 50-ից նա պէտք է դուրս բերէ 5—6 օրուայ ուտելածախս և յետոյ, Թիֆլիսում նա պարտաւոր է վճարել ամեն մի գերանի համար 30 կոպէկ հարկ քաղաքին։

Այսպիսով մենք ինչ ենք տեսնում։ Այն, որ անտառից մինչ գետի նաւահանգիստը գերան բերելը նստում է 4 ր, 25 կոպ., մինչ Թիֆլիս հասցնելը ևս 1 ր. 50 կոպ., ուրեմն միասին ճանապարհածախս նստում է

5 ր. 75 կոպ., այսինքն գերանի գնի (8 ր.) մոտ 72%-ը, և նրանից ստացած տախտակների և մնացորդների գնի (10 ր. 60 կ.) 50%-ը։

Եթէ մեզանում տախտակը այդքան թանկ է, դորանում ուրեմն ամենից շատ մեղաւոր է անտառային ճանապարհների վատութիւնը և մենք խօսում ենք այստեղ գլխաւորապէս մասնաւոր անձերին պատկանող անդամների մասին, որոնք, որպէս վերը տեսանք, Անդրկովկասի չորս նահանգներում (Երևանի նահանգը չը հաշուած) կազմում են ոչ պակաս քան 1 միլիոն 571 հազար դեսեատին, այսինքն նոյն նահանգների բոլոր անտառների 40%-ը։

Բանն էլ հենց նրանումն է, որ մասնաւոր անձերին պատկանող, այլապէս կալուածատիրական անտառները, շատ սակաւ բացառութիւններով, փչացրած են ճանապարհներին և բնակութեան մոտ տեղերում, իսկ հեռու անտառներում հաղորդակցութեան միջոցները անտանելի են։ Եւ այդտեղ էլ ծառեր կտրելու գործը շարունակում է նոյն անտնտես կերպով կատարուել, որպէս և միշտ եղած է մեզանում։

Ինչն է արդեօք նպաստել և նպաստում մեզանում կալուածատիրական անտառների այդ կործանիչ տնտեսութեան։

Ամենադլխաւորը՝ անտառային սեպհականութեան իրաւաբանական բնաւորութիւնն է։ Եւ իրօք, մասնաւոր անձերի անտառները մեծ մասամբ դեռ չափուած չեն տէրութեան օրգաններից։ Այդ պատճառով սեպհականութիւնը դեռ մնում է անհաստատ վիճակի մէջ։ Դորանից է, որ այդ անտառները մնում են անքաժան՝ մասնակից անձերի մէջ։ Որպէս զի սեպհականութիւնը ճանաչուի տէրութիւնից, նոքա, այդ տէրերը, աշխատում են իրանց անտառները կապալառուների տալ, որով նոքա ստեղծում են տիրապետութեան համար փաստական մոմենտներ, իսկ այդ նպատակին հասնում են նոքա բնակեցնելով իրանց անտառները կապալառուներով։ Այդպիսի անտառային բնակիչները ամենից առաջ աշխատում են իրանց ապահովել վարելահողով և խոտ հարելու տեղերով։ Օգնականներ նոքա գտնում են կացնի և կրակի մէջ։ Ցանկացած տեղում նոքա կտրատում են ծառերը և ամառաւ շոքերին կրակի ճարակ տալիս։ Այդպէս է վարուում ամեն մէկ կապալառու։ Աւելցրէք դորա վերայ նաև այն, որ ամեն մի գիւղ, որի մոտ անտառ կայ, իւր տաւարը արածացնում է մոտ անտառում, որը ի հարկէ փչացնում է։

Այսպիսով եթէ նշանակելու լինինք այդ բոլոր պատճառներով բաց մնացած տեղերը, կը ստանանք ահագին տարածութիւններ։ Իսկ տեղը խամ նոր անտառ չի մեծացնում։

Ցիտոյ կապալառուն շարունակում է իւր կործանիչ գործը։ Գիւղատնտեսութիւնից ազատ ժամերը նա նուիրում է իրան անտառային դոր-

ծին։ Տիրոջից ստանում է թույլատրություն թուղթ ծառեր կտրելու, առանց որոշելու ոչ տարածությունը, ոչ տեղը։ Մայիս ամսին նա կտրում է չորս սաժենանոց ծառեր, որ նա կամ նույն տարուայ աշնան և կամ մի երկու տարուց յետ, չորս սաժեն գերաններ կտրելով՝ տանում է մօտակայ գետի նաւահանգիստը և վճարելով անտառի տիրոջ որոշած մասը, ծախում է գերանը վերը յիշած գներով։ Ասացի, որ ծառից նա ջոկում է 4 սաժենանոց ուղղաձիգ բունը, իսկ բունի մնացած մասը և ճիւղերը, որոնք կազմում են ընդհանուր մասսայի 60%-ը, թողնում է անտառում, որ և փտում է և ճիճուների ու ապագայ հրդէհի կերակուր դառնում։

Այսպիսով միմիայն պետական գանձարանը և մի քանի մասնաւոր անձեր դեռ ևս պահպանել են ճանապարհներին և բնակութեան մօտ իրանց անտառները, իսկ մասնաւոր անձերի լաւ անտառները պէտք է որոնել լեռնային, դժուար մատչելի և հեռու տեղերում։

Անտառատէրը ինքը կատարեալ գերի է ստեղծած հանգամանքների։ Եթէ նա ուզենայ էլ ինքը չահեցնել իւր անտառը, նա էլի սարսափած կը լինի ընկնել կապալառուների ձեռքը։ Հարկաւոր են բանուորներ գիւղացիներից. բայց սոքա էլ ազատ են միայն տարուայ 2—3 ամիսը։ Իսկ բաւական է որ տաւարի ցաւ (էպիզոօտիա) երևայ, որ շատ սովորական է մեղանում, ամենքը քչում են իրանց տաւարը անտառի խորքերը և սպասում մինչև ցաւի անցնելը և կամ ցաւին զոհ են գնում։ Հետևանքը այն է լինում, որ պակասում են բանուոր ոյժեր թէ մարգկանցով և թէ տաւարով։ Այդ հանգամանքներում, ի նկատի ունենալով անտառի վատ ճանապարհները, ինչ անէ անտառատէրը, որը որ և է կապալ է վերցրել և ստիպուած է իւր ժամանակին գերանը կամ տախտակը տեղը հասցնել։ Տուգանքներ և սնանկութիւն...

Մենք դեռ չենք խօսում կալուածատիրոջ ֆինանսական դրութեան մասին, քանի որ կալուածները մեծագոյն մասով դրաւ են դրուած վարկի ընկերութիւնների և մասնաւոր անձերի մօտ, որոնց պահանջած տոկոսները կապիտալի չիջման մասով սովորապէս այնքան մեծ են, որ անտառը փչացնելու դնով անգամ նա դժուարանում է իւր պարտքից ազատուել։ Եվ որտեղից նա մտածի կապիտալներ դնել իւր անտառի վերայ, քանի որ տարէնը երկու անգամ նրան սպառնում է հրապարակական վաճառումը բանկային հաստատութիւններից՝ իւր ժամանակին ապառիկները (նեդոիմկա) չը վճարելու համար, իսկ ամեն րոպէ էլ սպասում է իւր մասնաւոր պարտատէրերի կողմից դատարանական գործողութիւնների?!...

Եւ ահա թէ ինչպէս է պատահել, որ, Կովկասը, լինելով անտառներով հարուստ երկիրներից մէկը, այս օրուայ օրս սարսափած է անտառային նիւթերի համար չը բաւականանալ իւր փայտով, այլ նաև դիմել Եւրոպական Ռուսիային և Շուեդիա ու Նորուեգիային և դեռ Հիւսիսային Ամերիկային։

Մասնաւոր անձերի անտառները ապահովելու համար ապագայ փչացումներից և խրախուսելու համար անտառատէրերին, որ իրանք զբաղուեն իրանց տնտեսութիւնով, տէրութիւնը արել էր մի շարք օգտակար կարգադրութիւններ, որոնց մէջ, հներից, կարևոր է 15 մայիսի 1867 թւականի անտառապաշտպան օրէնքը, որով մասնաւոր անտառատէրերին հեշտացրուեց հրաւիրել իրանց ծառայութեան համար անտառապահ ծառայողների կարգից մասնագէտներ, յատկացնելով սրանց պետական ծառայութեան իրաւունքները։ Նոյն օրէնքով աւելի խիստ պատիժների են ենթարկուում ծառերի կամայական կտրատումները կողմնակի մարդկանց կողմից։

Բայց այդ օրէնքը չարգելեց այնուամենայնիւ, որ անտառատէրերը իրանք փչացնեն իրանց անտառները մինչ այն աստիճան, որ համարեա ժողովրդական բարօրութիւնը զորանով խախտուած զգաց իրան.

Եւ ահա այդ հանգամանքների մէջ է որ հասունացաւ 4 ապրիլի 1888 թւականի անտառապաշտպան օրէնքը (Лѣсохранительный законъ 4 апрѣля 1888 года)։

Այս օրէնքով ընկան տէրունական խնամատարութեան ներքոյ եւրոպական Ռուսիայի և Կովկասի բոլոր այն անտառները և մացառները, որոնք պահում են աւազը գետերի, լճերի, ծովերի, ջրանցքների և ջրի արհեստական ամբարների ափերը. յետոյ որոնք պաշտպանում են քաղաքները գիւղերը, մշակուած հողերը, ամեն տեսակ կալուածները և ճանապարհները; աւազի հեղեղումներից. յետոյ որոնք պահպանում են գետերի, գետակների ափերը և աղբիւրները՝ փլումներից, հեղեղներից, անտառներ և մացառներ, որոնք կան լեռների և սոցա լանջերի վերայ և որոնք պահպանում են գետինը անձրևային հեղեղներից և պաշտպանում ձիւնի կոյտերի փլումներից ու արգելում առհասարակ սրընթաց հեղեղներից։

Այդ կարգի անտառները այդ օրէնքը անւանում է պաշտպանելի անտառներ (защитные лѣса).

Բայց ամենաթեթև մի հայեացք եթէ գցելու լինենք Կովկասի տեղագրութեան, տոպոգրաֆիայի վերայ, կը համոզուենք, որ այդ երկրի անտառները, մեծագոյն մասամբ, իրանց բնաւորութեամբ ընկնում են պաշտպանելի անտառների կատեգորիայի տակ, չը նայած որ առ այժմ, Կովկասում պաշտպանելի ճանաչուած են գեռ ևս միայն Հիւսիսային Կովկասի Ստաւրապոլի նահանգի մի քանի անտառները, այնտեղ, ուր անտառների ջնջումը հասել է սպառնացող չափերի և կամ ուր առհասարակ անտառների մեծ կարիք է զգացուում։ Այդ տեղերի համար առանձին կանոնադրութիւններ են տրուած։

Ընդհանուր հսկողութիւնը անտառապաշտպան օրէնքի գործադրութեան վերայ յանձնուած է պետական կալուածների մինիստրութեան, իսկ անմիջական տեսչութիւնը յանձնուած է անտառապաշտպան կոմիտեներին, որոնք, նահանգապետների նախագահութեամբ, կազմուած են հետևեալ ան-

դամներից՝ ազնվականութեան նահանգական առաջնորդից, նահանգական դատարանի նախագահից, պետական կալուածների կառավարչից, անտառային բեւիդոր-ինստրուկտորից, նահանգական զեմստուօյի նախագահից, երկու տեղական անտառատէրերից, որոնք ընտրւում են նահանգական զեմստուալին ժողովից։ Հարկաւոր դէպքերում, իբր անդամներ, կոչւում է նաև հաղորդակցութեան ճանապարհների վարչութեան ներկայացուցիչը։

Ա. այժմ բաւականանում ենք միմիայն յիշատակելով այդ օրէնքի գոյութիւնը, առանց նորա մանրամասնութիւնների մէջ մտնելու, որ մեզ փոքր ինչ հեռու կը տանէր։

Կը վերջացնենք ներկայ յօդուածը յիշատակելով նաև, որ մասնաւոր անձերին տրւում են նաև պրեմիաներ լաւագոյն տնտեսութեան համար և տէրութիւնից նշանակած տեղերում անտառ գցելու համար։ Առաջինների համար տրւում է պրեմիա 300 պոլիմպերիալ և ոսկէ մեդալ, իսկ երկրորդների համար՝ 500 պոլիմպերիալ նպանապէս ոսկէ մեդալով, և միևնոյն ժամանակ պետական կալուածների մինիստրին իրաւունք է տրւած աւելացնել պրեմիան ի հաշիւ առաջւայ տարիներում չը տրւած պրեմիաների։

Յիշատակենք նաև, որ պետական խորհրդի 21 մարտի 1888 թ. կարծիքի բարձրագոյն հաստատութիւնով՝ խստացրած են պատիժները՝ անտառապաշտպան օրէնքը խախտողների դէմ, բայց մանաւանդ ուրիշի անտառի գողութեան և վնասներ տուողների համար։

Անտառները պաշտպանելիների կարգում ընդունել տալու իրաւունքը պատկանում է պետական կալուածների վարչութիւններին, նահանգական և գաւառական զեմստուալին վարչութիւններին և հաղորդակցութեան ճանապարհների վարչութեան։